

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

|  |   |
|--|---|
| <b>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</b>                                      | <b>Էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ-էլեկտրիկ</b>  |
| <b>Դերը</b>  | Էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ-էլեկտրիկը տներում, կազմակերպություններում, արտադրամասերում և այլ վայրերում հավաքում, կարգավորում, տեղակայում, նորոգում և փորձարկում է էլեկտրական և էլեկտրամեխանիկական սարքավորումներ և այլ էլեկտրասարքեր:  |
| <b>Խնդիրների բնագավառ 1 Հետազոտել էլեկտրասարքավորումները</b>               |   |
| <b>Աշխատանքային գործընթացը</b>   | Օգտագործելով համապատասխան գործիքներ, սարքեր և հարմարանքներ հետազոտել էլեկտրական սարքավորումները, դրանց առանձին հանգույցները, գնահատել դրանց տեխնիկական վիճակը, բացահայտել չաշխատող հանգույցները, նշել հնարավոր պատճառները, գնահատել նորոգման հնարավորությունը և աշխատանքների հնարավոր ծավալը:                       |
| <b>Կատարման չափանիշները</b>  | Սարքավորման կամ հանգույցի տեխնիկական վիճակը բնութագրված է, բացահայտված են չաշխատող դետալները կամ հանգույցները, դրա պատճառները, գնահատված է նորոգման հնարավորությունը, սահմանված է աշխատանքների ծավալը:  |
| <b>Խնդիրների բնագավառ 2 Նորոգել և փորձարկել էլեկտրասարքավորումներ</b>      |   |
| <b>Աշխատանքային գործընթացը</b>   | Ըստ անսարքության բնույթի ապամոնտաժել կամ կազմատել սարքավորումը կամ համապատասխան հանգույցը, վերացնել անսարքությունը՝ կատարելով նաև միջանկյալ ստուգումները, հավաքել, տեղադրել նորոգված սարքավորումը, հանգույցը, կատարել վերջնական ստուգում և փորձարկում:  |
| <b>Կատարման չափանիշներ</b>   | Սարքավորման անսարքությունը վերացված է, այն նորմալ աշխատում է, նորոգման աշխատանքները կատարված են տեխնոլոգիաներին համապատասխան, գործիքներն ու սարքերն օգտագործվել են ըստ իրենց նշանակության, նյութերն օգտագործվել են խնայողաբար, համաձայն սահմանված նորմերի կատարվել են միջանկյալ ստուգումներ և վերջնական փորձարկում: |
| <b>Խնդիրների բնագավառ 3 Հավաքել և կարգաբերել էլեկտրական սարքավորումներ</b> |   |
| <b>Աշխատանքային գործընթացը</b>   | Ընտրելով անհրաժեշտ դետալները հավաքել էլեկտրական սարքավորումը կամ դրա որևէ հանգույցը՝ ապահովելով համատեղելիությունը, ըստ անհրաժեշտության կատարել կարգաբերում, ստուգել սարքավորման կամ հանգույցի աշխատանքը  |

|                                |  |
|--------------------------------|--|
| <b>Կատարման չափանիշներ</b>     | Հավաքված է սարքավորումը կամ հանգույցը, դրանց աշխատանքային պարամետրերը պահանջվող սահմաններում են, ապահովվում է դրանց աշխատանքի ռեժիմը, կարգաբերումը կատարված է  |
| <b>Խնդիրների բնագավառ 4</b>    | <b>Տեղակայել և մոնտաժել էլեկտրասարքավորումներ</b>  |
| <b>Աշխատանքային գործընթացը</b> | Սահմանված կանոնների և նորմերի համաձայն տեղակայել և մոնտաժել սարքավորումը՝ անհրաժեշտության դեպքում ընտրելով նրա ճիշտ տեղը և դիրքը, կատարել հողանցում, ստուգել սարքավորման աշխատանքը տարբեր ռեժիմներում, ապահովել այլ սարքերի հետ նրա աշխատանքի համատեղելիությունը |
| <b>Կատարման չափանիշներ</b>     | Սարքավորումը տեղակայված և մոնտաժված է, աշխատում է նորմալ, պահպանված են կանոնների և նորմերի պահանջները  |
| <b>Խնդիրների բնագավառ 5</b>    | <b>Կատարել հաշվարկներ, հավաքել էլեկտրական սխեմաներ</b>   |
| <b>Աշխատանքային գործընթացը</b> | Համաձայն նորմաների հաշվարկել աշխատանքների համար պահանջվող նյութերի և միջոցների քանակները, նախագծել և հավաքել պարզ էլեկտրական սխեմաներ՝ ըստ իրավիճակի   |
| <b>Կատարման չափանիշներ</b>     | Ըստ աշխատանքների ծավալի և բնույթի նյութերի և միջոցների ծախսը հաշվարկված է, գնահատված է աշխատանքերի տևողությունը, իրավիճակահին համապատասխան հավաքված է էլեկտրական սխեմա   |
| <b>Խնդիրների բնագավառ 6</b>    | <b>Խորհրդատվություն տրամադրել շահագործողներին</b>  |
| <b>Աշխատանքային գործընթացը</b> | Բացահայտել խորհրդատվության կարիք առաջացնող հարցերը, տրամադրել խորհրդատվություն ինչպես տիպական, այնպես էլ առանձնահատուկ դեպքերի վերաբերյալ  |
| <b>Կատարման չափանիշներ</b>     | Շահագործողները բավարար չափով տեղեկացված են էլեկտրական մեքենաների և սարքավորումների օգտագործման հետ կապված հարցերում  |
| <b>Խնդիրների բնագավառ 7</b>    | <b>Իրականացնել էլեկտրասարքավորումների տեխնիկական սպասարկում</b>  |
| <b>Աշխատանքային գործընթացը</b> | Ըստ սարքավորումների խմբերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմի որոշարկում, աշխատանքների հաջորդականության և ժամկետների նախանշում, տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացում   |
| <b>Կատարման չափանիշներ</b>     | Տեխնիկական սպասարկման աշխատանքները կատարվում են համաձայն ռեժիմի և լրիվ   |
| <b>Պատասխանատվությունը</b>     | Ֆականագործ-էլեկտրիկը պատասխանատու է.<br>էլեկտրասարքավորումների անսարքություններն ու վնասվածքները ճիշտ ախտորոշելու համար  |

|   |  |
|---|--|
|   | <p>վերանորոգման աշխատանքները որակյալ կատարելու համար նյութերը խնայողաբար օգտագործելու համար</p> <p>չափիչ-ստուգիչ սարքերն ու գործիքներն անխափան շահագործելու համար</p> <p>ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար</p> <p>աշխատանքների հետ կապված ծախսերի վերաբերյալ ճիշտ տեղեկատվություն տրամադրելու համար</p>  |
| <b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b> |  |
| <b>Լեզուներ</b>   | <p>հայերեն - գերազանց</p> <p>մեկ օտար լեզու - բավարար</p>  |
| <b>Համակարգիչ</b>   | <p>MS Word, Excel - բավարար</p> <p>Internet Explorer` բավարար</p>  |
| <b>Գիտելիքները</b>  | <ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրատեխնիկայի հիմունքները</li> <li>• ճարտարագիտական գրաֆիկա</li> <li>• օգտագործվող նյութերի տեսակները և հատկությունները</li> <li>• մոնտաժային գործիքների և չափիչ ստուգիչ սարքավորումների նշանակությունները և աշխատանքների սկզբունքները</li> <li>• հողանցման տեսակները և նշանակությունը</li> <li>• աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն:</li> </ul> |
| <b>Կարողությունները և հմտություններ</b>                                       | <ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքային տեղի և գործիքների ճիշտ նախապատրաստում</li> <li>• տեղակայման և մոնտաժային գծագրերի և սխեմաների ճիշտ մեկնաբանում</li> <li>• անսարքությունների և վնասվածքների ճիշտ գնահատում և բացահայտում</li> <li>• նորոգման ճիշտ և որակյալ կատարում</li> <li>• կատարված մոնտաժի ստուգում և փորձարկում:</li> </ul>  |
| <b>Վերաբերմունքը</b>  | Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, նորը ընկալող:  |

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1003 «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ ԷԼԵԿՏՐԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

«Էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ - էլեկտրիկ» որակավորմամբ արհեստավորի մասնագիտական որակավորման գնահատման ժամանակ հաշվի է առնվում նրա գործունեության պարտականություններով սահմանվող հիմնական կարողությունների և հմտությունների շրջանակը՝ համաձայն ներքոշարադրյալի.

Էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ-էլեկտրիկը պետք է.

- կարողանա նախապատրաստել նյութերը, գործիքները, սարքավորումները և աշխատատեղը,
- իմանա պայմանական նշանները և կարդալ էլեկտրական սխեմաներ.
- կարողանա բացահայտել էլեկտրական սարքավորումների անսարքությունների բնույթն ու պատճառները,
- կարողանա փոխել կամ նորոգել էլեկտրական սարքավորումը կամ հանգույցը՝ պահպանելով սահմանված տեխնոլոգիան,
- կարողանա ստուգել և փորձարկել նորոգված էլեկտրական սարքավորումները,
- կարողանա կարգավորել նորոգված էլեկտրական սարքավորումների պարամետրերի փոփոխությունը,
- կարողանա տեղակայել և կարգաբերել էլեկտրական սարքավորումները,
- կարողանա ապահովել համատեղ աշխատող սարքերի աշխատանքի համատեղելիությունը,
- կարողանա հավաքել տարբեր բարդության էլեկտրական սխեմաներ,
- կատարված աշխատանքներին առնչվող փաստաթղթերի կազմում,
- կարողանա տալ խորհրդատվություն շահագործողներին,
- կարողանա օգտվել տեղեկատվական և տեխնիկական գրականությունից ու փաստաթղթերից,
- պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,
- կարողանա ցուցաբերել առաջին օգնություն:

Որակավորման շնորհման ժամանակ ուսանողը պետք է անսխալ կատարի բոլոր գործնական վարժությունները և ցուցաբերի աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ տեսական գիտելիքների իմացություն: Տեսական գիտելիքների շրջանակը որոշվում է, հաշվի առնելով տարբեր փոփոխվող իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունելու հիմքի առկայությունը: